«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 13-Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական, ընտրովի մարմին է:

1.2. Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ, Հիմնադրամի ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

1.3 Ընկերությունն իր նպատակների իրականացման համար կարող է համագործակցել Հիմնադրամի ստորաբաժանումների ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատությունների, գիտական կենտրոնների հետ:

1.4. Ընկերության անվանումն է

✓ Հայերեն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանողական գիտական ընկերություն

✓ ռուսերեն Студенческое научное общество Фонда "Государственного института физической культуры и спорта Армении"

✓ անգլերեն Student Scientific Society of the "State Institute of Physical Culture and Sports of Armenia" Foundation

1.6. Ընկերությունը կարող է ունենալ ձևաթուղթ և կնիք:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ուսանողական գիտական ընկերության հիմնական նպատակն է՝

1) կազմակերպել և համակարգել ուսանողների կրթական, գիտական և հետազոտական գործունեությունը:

2.2. Ուսանողական գիտական ընկերության հիմնական խնդիրներն են՝

1) Գիտական աշխատանքների, միջոցառումների իրականացում,
2) Գիտական հոդվածների տպագրում հայաստանյան և միջազգային գիտական ամսագրերում
3) ուսանողների ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,
4) խնդիրների իրականացման նպատակով Ընկերությունը կարող է համագործակցել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային գիտական ընկերությունների հետ,
5) մշակել և Հիմնադրամի հաստատմանը ներկայացնել ներբուհական դրամաշնորհային ծրագրեր,
6) մասնակցել դրամաշնորհային ծրագերի:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերության կառավարման մարմինը հանդիսանում է Ուսանողական գիտական խորհուրդը, որի կազմի մեջ են մտնում նախագահը, քարտուղարը, ամբիոնների կողմից երաշխավորված ուսանողները և ֆակուլտետների կողմից ներկայացված ընկերության անդամները:

3.2 Յուրաքանչյուր ամբիոնի կողմից երաշխավորվում է երեք ուսանողների թեկնածություն, ովքեր ներկայացնում են իրենց ամբիոնները ուսանողական գիտական ընկերության խորհրդում:

3.3 Յուրաքանչյուր ֆակուլտետի կողմից ներկայացվում է մեկ ուսանողի թեկնածություն:

3.2 Ընկերության խորհրդի կազմը և նախագահի ընտրության արդյունքները հաստատվում են Հիմնադրամի Գիտական խորհրդի կողմից:

3.3 Ընկերության նախագահը ընտրվում է խորհրդի կազմից չորս տարին մեկ անգամ՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:

3.6 Ընկերության անդամության վերաբերյալ գրավոր դիմում ներկայացում է խորհրդի նախագահի անունով:

3.7 Ընկերությունը վարում է իր անդամների հաշվառումը և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ թարմացնում է տվյալները:

3.9 Ընկերության խորհուրդը

1. մշակում և ընդունում է ընկերության տարեկան աշխատանքային պլանը

2.Կազմում և հաստատում է ընկերության նպատակներից բխող միջնաժամկետ և հեռանկարային ծրագրերը:

3.քննարկում և Հիմնադրամի գիտական խորհրդին է ներկայացնում սույն կանոնակարգի փոփոխությունները

4.Համագործակցության առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրամի առանձին ստորաբաժանումներին:

5.Ընկերության խորհրդի նիստերը իրավազոր են եթե նրան մասնակցում է խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը:

3.9 Խորհրդի նախագահը

1. Իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը
2. Կազմում և Հիմնադրամի գիտական խորհրդին է ներկայացնում ընկերության տարեկան հաշվետվությունը (սույն կարգի իմաստով տարեկան հաշվետվության ժամանակահատված է համարվում ուսումնական տարին)
3. Նախագահում է ընկերության խորհրդի նիստերը:

3.10 Խորհրդի քարտուղարը

1. Խորհրդի քարտուղարը ընտրվում է խորհրդի անդամներից ձայների պարզ մեծամասնությամբ:

2. Քարտուղարը համակարգում է քարտուղարության աշխատանքները, լրացնում և պահպանում է խորհրդի նիստերի արձանագրությունները և Ընկերության փաստաթղթերը:

3. Իրականացնում է շահառուների պատշաճ ծանուցման գործընթացները:

3.11 Ընկերության անդամ կարող է դառնալ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանողը, ով սովորում է երկրորդ և բարձր կուրսերում, ով զբաղվում է գիտահետազոտական աշխատանքով և ցանկանում է դառնալ ընկերության անդամ:

3.12 ՈՒԳԸ-ն անդամը իրավունք ունի.

1) ընտրել և ընտրվել ՈՒԳԸ-ն կազմի մեջ,

2) ստանալ տեղեկություններ ՈՒԳԸ-ն միջոցառումների մասին,

3)զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ ցանկացած թեմատիկայով և մասնակցել բոլոր միջոցառումներին նախատեսված Ընկերության աշխատանքային պլանով,

4) հրատարակել սեփական գիտական հետազոտությունների արդյունքները,

5)ներկայացնել առաջարկություններ Ընկերության գործունեության, ուսանողների գիտահետազոտական գործունեության վերաբերյալ,

6)մասնակցել կոնֆերանսներին, սեմինարներին, մրցույթներին,

7)ազատորեն արտահայտել իր կարծիքը ցանկացած քննարկվող հարցի շուրջ,

8)մասնակցել ՈՒԳԸ-ն որոշումների մշակման մեջ, հանդես գալ առաջարկություններով և դիմումներով,

9) քննադատել ՈՒԳԸ-ն ցանկացած ենթաաբաժնի և ցանկացած անդամի,

10) մասնակցել ՈՒԳԸ-ի բոլոր ժողովներին:

3.13.ՈՒԳԸ-ի անդամների պարտականությունները.

1) մասնակցել գիտահետազոտական գործունեությունում,

2)ելույթներով հանդես գալ գիտաժողովներին, սեմինարներին և այլ գիտագործնական միջոցառումներին,

3) մասնակցել ՈՒԳԸ-ն գիտակազմակերպչական աշխատանքներում,

4)ղեկավարվել իր գիտահետազոտական գործունեությունում սույն կանոնակարգով,

5)նպաստել ուսանողների ներգրավմանը գիտական և հետազոտական գործունեության մեջ,

6) կատարել ՈՒԳԸ-ն կողմից տրված հանձնարարությունները,

7) մասնակցել ՈՒԳԸ-ն ժողովներին:

5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1.Ընկերության միջոցները գոյանում են Ինստիտուտի կողմից տրվող հատկացումներից, նվիրատվություններից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2.ՈՒԳԸ-ն անվճար կարող է օգտվել բուհի տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից համաձայն սահմանված կարգի:

5.3.Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնակարգի նպատակների և խնդիրների իրականացման համար:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. ՈՒԳԸ-ն իր գործունեությունը դադարեցնում է Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և միջոցները պատկանում են Ինստիտուտին:

7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատման հաջորդող օրվանից :

7.2 Սույն կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: